1. Հայաստանի երկաթուղիներով Հայաստանի վրայով Վրաստան, կամ Վրաստանից Հայաստանի սահմանները և վրաց երկաթուղիներով Վրաստանի վրայով Հայաստան կամ Հայաստանից Վրաստանի սահմանները փոխադրող ապրանքների համար սահմանւում է ազատ փոխադրութիւն, այսինքն փոխադրութիւն առանց մաքսի:

2. Սոյն դաշնագիրը կնքւում է երեք տարով, ըստ որում դաշնագրի հաստատման օրից մի տարի անցած՝ դաշնագիրը կնքող կողմերից իւրաքանչիւրը իրաւունք ունի յայտարարել վերաքննել դաշնագիրը և այս դէպքում՝ դաշնագիրն իր ոյժի մէջ մնում է այդ յայտարարութեան օրւանից սկսած վեց ամսւայ ընթացքում: Եթէ այդ ժամանակամիջոցում կողմերը դաշնագրի վերաքննութեան մասին համաձայնութեան չգան — դաշնագիրը կորցնում է իր ոյժը:

3. Հաստատւած դաշնագրի փոխանակութիւնը կատարւելու է Թիֆլիզում երկու շաբաթւայ ընթացքում:

4. Ներկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ:

Վրաստանի Հանրապետութեան Ներքին Գործերի և Զօրական Նախարար Ն. ՌԱՄԻՇՎԻԼԻ

Հիմնադիր Ժողովի Փոխ-Նախագահ Ս. ՄԴԻՎԱՆԻ

Ստեփան Գրիգորեան ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Հայաստանի Պարլամենտի անդամ Սմբատ Ցարութիւնեան ԽԱՉԱՏՐԵԱՆ

Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտը՝ 1919թ. նոյեմբեր 11-ի նիստում, լսելով և քննութեան առնելով ներկայ դաշնագիրը, միաձայն որոշեց—«Հաստատել սոյն դաշնագիրը ապրանքների ազատ փոխադրութեան մասին, որ կնքել են Վրաստանի և Հայաստանի Հանրապետութիւնների Կառավարութիւնները Թիֆլիզում 1919թ. նոյեմբեր 3-ին»:

(Հաստատւած է 1919թ. նոյեմբ. 11-ին)

Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնների՝ վիճելի խնդիրները համաձայնութեամբ կամ պարտադիր իրաւարքի միջոցով լուծելու համար՝ կնքւած դաշնագրի հաստատման մասին. —

Թիֆլիզ, 1919թ. նոյեմբ. 3.

Վրաստանի Կառավարութիւնը՝ ներկայացւած ի դէմս Ներքին Գործերի և Զօրական Նախարար Նոյ Վիսսարիոնովիչ ՌԱՄԻՇՎԻԼՈՒ և Վրաստանի Հանրապետութեան Հիմնադիր Ժողովի Փոխ-Նախագահ Սիմոն Գուրգենովիչ ՄԴԻՎԱՆՈՒ մի կողմից և Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը՝ ի դէմս Ստեփան Գրիգորեան ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ և Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտի անդամ Սմբատ Ցարութիւնեան ԽԱՉԱՏՐԵԱՆԻ միւս կողմից, ծանօթանալով լիազօրութիւնների հետ և, գտնելով դրանք պահանջւած ձևի ու պատշաճ կարգի, կնքեցին սոյն դաշնագիրն առ այն, որ